ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2025 թ.-ի **առաջին** նիստը տեղի է ունեցել 27.03.2025 թ.-ին**,** որին խորհրդի 29 անդամից նիստին մասնակցել է 21-ը, ևս՝ 3 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք
2. Դպրոցների բովանդակային կառավարումը ԿԳՄՍ նախարարության, իսկ տնտեսական մասը՝ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը հանձնելու վերաբերյալ օրենսդրական փաթեթի նախագծի ներկայացում (զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյան)
3. Հարց ու պատասխան
4. Ելույթներ /մինչև 3 րոպե/

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2025 թ.-ի **երկրորդ** նիստը տեղի է ունեցել 25.06.2025 թ.-ին: Խորհրդի 29 անդամից նիստին մասնակցել է 20-ը, ևս՝ 7 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք
2. Երիտասարդական կենտրոնների/տարածքների մեթոդաբանություն (զեկուցողներ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյան, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի» խորհրդի նախագահ Արթուր Նաջարյան)
3. Դպրոցներում անվտանգության ապահովման ստանդարտների մշակում (զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյան)
4. Հարց ու պատասխան
5. Ելույթներ /մինչև 3 րոպե/

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2025 թ.-ի **երրորդ** նիստը տեղի է ունեցել 29.09.2025թ.-ին: Խորհրդի 27 անդամից նիստին մասնակցել է 16-ը, ևս՝ 4 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք
2. «Իրական Հայաստանի գեղագիտության տեղորոշման և աջակցության» հայեցակարգի նախագիծ (զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյան)
3. Հարց ու պատասխան
4. Ելույթներ /մինչև 3 րոպե/

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2025 թ.-ի **չորրորդ** նիստը տեղի չի ունեցել, քանի որ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ N 835–Լ որոշմամբ հաստատվել են նախարարներին կից հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը, որոնք ենթադրում են նոր հասարակական խորհրդի ձևավորում՝ նոր գործառույթներով: Այդ նպատակով ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով նախարարությունը 2025 թվականի նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 5-ը ներառյալ հայտարարել է հայտերի ընդունելություն: Ներկայացված հայտերի գնահատման և նախարարին հիմնավորված առաջարկությունների ներկայացման նպատակով նախարարի 19.11.2025թ. թիվ 2101-Ա հրամանով ստեղծվել է գնահատող հանձնաժողով, որում ընդգրկվել են ներկայացուցիչներ Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության, Իրավաբանական և Անձնակազմի կառավարման վարչություններից: Այդ ընթացքում ստացվել է 65 հայտ: Եվս 3 հայտ ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ, որոնք, ըստ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835–Լ որոշման հավելված N2-ի 10-րդ կետի, չեն դիտարկվել:

Ստացված հայտերից 32-ը ներկայացվել են հասարակական կազմակերպությունների, իսկ 33-ը՝ ֆիզիկական անձանց կողմից: 65 հայտերից 42-ը եղել է Երևան քաղաքում գործունեություն ծավալող, իսկ 23-ը՝ համայնքներում:

Հանձնաժողովն ուսումնասիրել է ստացված հայտերի՝ վերոնշյալ որոշման հավելված N 2-ի 6-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանությունը, որի արդյունքում 22 (12 ֆիզիկական անձ, իսկ 10-ը՝ կազմակերպություն) հայտ չի համապատասխանել այդ պահանջներին և մերժվել է՝ ԿԳՄՍ ոլորտներում սահմանված ժամկետով գործունեության փորձի կամ հավաստող փաստաթղթերի բացակայության հիմքով:

Այսպիսով՝ ԿԳՄՍ նախարարի 17.12.2025 թ. թիվ 2826 Ա/2 հրամանով հաստատվել է նախարարին կից հասարակական խորհրդի նոր կազմը, որը բաղկացած է 43 անդամից՝ ներառյալ նախարարը, որից 22-ը կազմակերպություն (7-ը՝ ՀՀ համայնքներից՝ բացի Երևանից), իսկ 21-ը՝ ֆիզիկական անձ (8-ը՝ ՀՀ համայնքներից՝ բացի Երևանից):

Ըստ վերոնշյալ որոշման հավելված N2-ի 7-րդ կետի՝ խորհրդի անդամների թվաքանակի 25%-ն ընդգրկվում են համայնքներում (բացառությամբ Երևան քաղաքի) գործող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Նոր խորհրդի կազմում ընդգրկված ներկայացուցիչներից համայնքներում գործունեություն են ծավալում 15 կազմակերպություն և ֆիզիկական անձ, որը համապատասխանում է կարգի պահանջներին:

Բացի այդ՝ խորհրդի աշխատանքները կազմակերպելու նպատակով ԿԳՄՍ նախարարի 14.11.2025 թ. թիվ 2646Ա/2 հրամանով նշանակվել են խորհրդի աշխատանքները համակարգող և պատասխանատու պաշտոնատար անձինք:

ԿԳՄՍ նախարարի 2026 թվականի 16.01.2026 թ. թիվ 55 Ա/2 հրամանով հաստատվել է նաև նախարարին կից հասարակական խորհրդի հիմնական նիստերի անցկացման տարեկան ժամանակացույցը: